

ման մը կը լուսաւորէ : գոնէ եթէ բնակելի ըլլար՝ մարդկութիւնն շարժմանք մը ի՞նչնէր և կը զուարճոնար, բայց ընդ հակառակն ուր որ ատենք քանի մը քաղաքներ կային՝ հիմայ շկան . շատ շատ գիւղաքաղաք մը կը գոնուի, և փոխանակ քսան հազար բնակչք քաղաքի մը՝ քանի մը հարիւր անձով պզոտիկ գիւղիկ մը կը տեսնուի : Երուսաղէմ՝ Հրէսաստանի տուածին քաղաքն՝ հիմայ հազիւ երեսուն հազար բնակիչ ունի, մայրաքաղաքի չնորդէն բոլորովին ելած, իրեն մոխրագոյն տուներովն և գմբէթներովն՝ բնակիչքն խիստ աղքատ են, ամեններն ուրախարար և բերկրակուն բան մը չունին :

Եթէ այս է Երուսաղէմն՝ մտածեցէք թէ ինչ պիտի լինին մեացածներն : Արդեօք այդ խեղճ գեղացիքն ինչ կերպարանք պիտի ունենան . առանց ամեննե-

վին բաղդի ձեռնտութեանց, առանց պերճանան, քիչով գոհանայով՝ օրեր նին կ'անցընեն, տնկածնին ժողովելով : Որչափ որ է պիտոքինին՝ այդշափ է նաև երենց գործոն կեանքն, աւելի մեռնելու քան թէ ապրելու երեսյթ մը կը ցոյցընեն :

Այսափի խեղճութեանց մէջ կարելի է արգեօք մաղձը փարատել և գառնութիւնը հեռու բռնել . ես կը խոստովանիմ որ և ոչ խոկ փորձած եմ: Հրէսատանի մէջ տիրութիւնն՝ աչքի առջև պայծառ կ'երևցընէ զառարկայս, և ըլգացման՝ իր սեփական պաշտօնն կատարել կու տայ . դանդաղ և ծանր մտածմանց համար միակ է, ուշաղրութեան և մտաց ամիկովման հակառակ ցնդումը շուտով կը վերցընէ, զասն զի մաղձոտ սրտի մը գաղաքարներն՝ աւելի արթուն են և աւելի հաստատ :

## ՍԱՀՄԱՆԱՎԵԼՄՐԻ ԿԱՄ ԽԱՇԱՋԱՆՔ

Կարծեմ քիչ անգամ հանդիպած լինի, որ օտար երկիրներու այցելու ճանապարհորդն, խոնջ՝ ի հիտազօտութեանց, վաստակեալ՝ ի ճանապարհէն, փոյելից և քրտնաթաթաւ, քաղցր հանդիսու վայելած չինի, և կամ անպանց ճաշիկով և վճիր առուակի մը ջրով՝ իւր քաղցն և ծարաւն անցուցած՝ ծառի մը հովանոյն ներքի, և անոր քով գտնուած աւելի կամ նոււազ անարուեստ յօրինուածովլը զրուագեալ վիմի մը քով, որ ճանապարհորդին կը ներկայանայ իրքե կայարան մը՝ իւր տամանելի պանդիստութեան մէջ :

Այսպիսի կայարանք բազմաթիւ էին թէ յԱրեկուտս և թէ մանաւանդ յԱրեկը՝ հին դարուց մէջ. բայց յետ ժամանակաց մասն մի երկաթուղեաց շինութեամբք անհետացան, և մասն մի ժամանակին ժանգն մաշեցուց, և հա-

զիւ տնոնց հետքն և աւելրակեն կարող եղան առ մեղ հասնիլ:

Այսպէս յԱրեկը՝ Եղիպատացին և Արաբացին անհուն աւազակոյաները կտրած անցած ժամանակ, երբեմն երբեմն իրրեն նախախնամական պարգև կը գտնէր այն ընդուրձակ անապատաց մէջ ջրհոր մը՝ իւր և իր միակ օգնական ձիոյն կամ մանաւանդ ուղույն պապակն անցընելու . և այն կը լինէր իրեն ընթացից շարունակութեան մէջ բաժանման կէտ մը, մինչև հասնէր ուրիշ նմանորինակ կայարանի մը: Պարսիկն և Հնդկաստանցին, ողք ոչ ջրոյ կարօտութիւն ունէին և ոչ անսպաս ներ կտրելու ստիպեալ էին, կը հանդիպէին երբեք երբեք իրենց ճանապարհաց վրայ՝ անզարդ և ողորկ մեծամեծ քարերու, որոց վրայ զրուած կը զըանէին իմաստուն աւածներ և կամ բա-

բայախօս վիլիսովիայից վսեմ իմաստ.  
ներ, որք այն միայնութեան մէջ իրենց  
իրրե աստուածային օրինաց ձայնին  
արձագանդը կը հնչեցընէին: իսկ յԱ-  
րեմուտո ցղնն և Հռովմայեցին չէին  
կրնար քանի մը քայլափոխ առնուլ  
իրենց աշխարհաց մէջ, առանց ակնարկ  
մը ձգելու ճանապարհաց վրայ՝ հովա-  
նաւոր ծառոց ստուերաց տակ զըտ.

նուած անդրեաց, և կամ ջրարրի գաշ-  
տաց, նուիրական անտառաց, լեռնց,  
գետոց, անձաւաց, որք չարուցանէին  
իրենց մոտաց մէջ աստուածոյ և կամ դիւ-  
ցաղնի մը արութեանց և առաքինու-  
թեանց յիշատակը, և կամ իմաստնց  
մը համբաւով հըռչակաւոր եղած սըր-  
բավայր մը:

Այսպէս նաև ուրիշ առէն հին ազ-




ՍԱՀՄԱՆԱԿ ՏՈՅ Ի ԿԻՒՄՐԻ

գաց և աշխարհաց մէջ բնածին բեր-  
մամբ մը հեթանոսութիւնն նուիրական  
գործեր էր զսահմանավէմն. զորս քրիս-  
տոնէութիւնն ոչ միայն պահեց, այլ և  
ազնուացուց, և աւելի զօրաւոր գործեց  
անոնց առ մարդն ունեցած ազդեցու-

թիւնը, փոխելով ինչ որ առասպելա-  
ծին էր և կամ մարդկային հանճարոյ  
ծնունդ՝ 'ի ատոյդ' և 'ի վսեմ գաղա-  
փարս քրիստոնէական կրօնից և կամ  
'ի ծնունդ աստուածային մոտաց: Այս-  
պէս սահմանավէմք՝ փոխեցան 'ի միջին

գարս՝ 'ի սահմանախաչս կամ 'ի խաչ-  
արձանս . և ի խմստամիրաց խօսից տեղ՝  
դրուագեցան աստուածագիր մստենին  
յաւիտենական ճշմարտութիւնքն . աս-  
տուածոց և կամ՝ զիւցազանց պատ'ի .

լրաց կամ անդրեաց , ովք ոչ միշտ պար-  
կեշտք էին և կամ առափինութեան  
յորդորք , փոխանսկեցին քրիստոնէա-  
կան կրօնից զիւցազանց կամ արբոց  
նկարք և բարեգործութիւնք :



Խ ԽԱՅՐԵԱՆԱՑ ԱՆԻՈՑ

Մեր հայրենեաց մէջ գտնուած այս  
տեսակ սահմանաքարերէն կամ խաչար-  
ձաններէն զոմանս կը ներկայացընեմք  
մեր ընթերցողաց՝ ներկոյ պատկերնե-  
րով , յայտնելով միանգամայն՝ որ ինչ-  
պէս ուրիշ աշխարհաց՝ այսպէս նաև  
Հայաստանի մէջ խաչարձանք և վէմք  
կը զործածուէին ոչ միայն երկու կամ

աւելի գաւառաց իրբե նշանաւոր սահ-  
մանավլոյր մը ցուցընելու համար , այլ  
և շատ սննդամ , ինչպէս նաև ցայսօր  
ժամանակին , կը ծառայեն երկրատեարց  
կալուածները իրարմէ բաժնող կէտը  
որոշելու , և կամ առ 'ի զարդ որմեց և  
գերեզմանաց , և կամ տխուր արկածի  
մը յիշատակը աւանդելու անցորդաց :

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆՔ

Թուաբանութիւն Համառուտ , աշխարհաբառ .	Հ. Հմայեակ Վ. Պատիկեանի .	ֆու . 1:75
— Նորին Բանալի լուծման առաջարկութեանց .	• • • • • • • • •	1:25
Մատնագիտութիւն Հայկական , տպագրութեան գիւտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց ցուցակ՝ գիւտական ծանօթութեամբ .	»	8:-